XII-XIII դդ. ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԶԱՐԴԱՀԱՐԴԱՐԱՆՔԸ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա.Գ.

Զարդարվեստն արվեստի ամենահին և ամենակենսունակ բնագավառներից է: Դա ամբողջ մի աշխարհ է՝ իր արտակարգ հարուստ բովանդակությամբ և արտահայտման հետաքրքիր ձևերով, որի արմատներն առնչվում են նախնադարյան հասարակության պատկերացումների ու հնագույն հավատալիքների հետ: Հնագույն ժամանակներից սկսած՝ արվեստի այդ տարածված ձևը, ինչպես իր ստեղծմամբ, այնպես էլ սեմանտիկայով և բազմաբնույթ նշանակությամբ, լայնորեն կիրառվել է տարբեր բնագավառներում՝ պաշտամունքային հուշարձաններ, տնային կահ-կարասիք, աշխատանքային գործիքներ, զենքեր, գերեզմանաքարեր և այլն: Ընդ որում, որքան հին, այնքան ավելի իմաստային ու գործնական-կիրառական նշանակություն է ունեցել զարդարվեստը:

Սկիզբ առնելով նախնադարյան ժամանակներից, զարդարվեստն անցել է զարգացման երկարատև ուղի՝ տարբեր ժամանակներում ունեցել տարբեր դեր ու իմաստ՝ համապատասխան տվյալ հասարակության գաղափարական հասկացողություններին, պատկերացումներին ու հավատալիքներին: Այդ հատկանիշների շնորհիվ զարդարվեստն ուներ նաև պատմական կարևոր սկզբնաղբյուրի նշանակություն:

Քաղաքակիրթ ժողովուրդները հատուկ ուշադրության են արժանացնում իրենց զարդարվեստը, մասնավորապես նրա ծագումնաբանությունն ու զարգացման փուլերի լուսաբանումը[1]:

Հայկական զարդարվեստը համաշխարհային արվեստի ուշագրավ երևույթներից է, որի գիտական ուսումնասիրություններն ու մեկնաբանությունները սկսվել են դեռևս XIXդ. վերջից (Վ.Սաասով, Ն.Մառ, Գ.Հովսեփյան, Թ.Թորամանյան, Ժ.Բալտրուշայտիս, Լ.Դուռնովո, Ա.Ավիրին, Ռ.Դրամբյան, Ն.Տոկարսկի, Ա.Յակոբսոն, Կ.Ղաֆադարյան, Ն.Ստեփանյան, Վ.Ղազարյան, Վ.Հարությունյան և ուրիշներ)[2]:

---

[1] *Տե՛ս, Гагарин Г., Сборник византийских и древнерусских орнаментов, СПб., 1887, Стасов В., Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, СПб., 1887. Лоренц И., Орнамент всех времен и стилей, СПб., 1898., Фрезер Д., Золотая ветвь, М., 1928, Веймарн Б., Сысоев П., Народное искусство СССР, М.-Л.,1949. Лелеков Л., Искусство древней Руси в его связях с Востоком, М., 1975.*

Стасов В., նշվ.աշխ., Марр Н., Кавказский культурный мир и Армения, СПб., 1915, Орбели И., Путеводитель по городищу Ани, СПб., 1910, Дурново Л., Саргисян М., Орнаменты армянских рукописей, Е., 1978. Токарский Н., Архитектура Армении, М., 1952. Якобсон А., Очерк истории зодчества Армении, М.-Л., 1950. Степанян Н., Чакмакчян А., Декоративное искусство средневековой Армении, Л., 1971., Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Ե., 1955., Асратян М., Армянская архитектура раннего христианства, М., 2000. Վ.Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, Ղազարյան Վ., Նկարազարդ խորանների մեկնություններ, Ե., 1995.

Առանձնապես պետք է նշել Ա.Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» ուսումնասիրությունը, որը եզակի է ինչպես հավաքած հսկայական նյութի հարստությամբ, այնպես էլ դրա միանգամայն նոր մեկնաբանություններով: «Զարդարվեստի մոտիվների հիմքում, - գրում է Ա. Մնացականյանը, - ընկած են, մի կողմից, բնության ուժերը՝ իրենց օրգանական և անօրգանական աշխարհներով, իսկ մյուս կողմից՝ հասարակական հասկացողությունները՝ իրենց պատմական առումով: Եվ այս բոլորը, որպես մարդկային տքնաջան աշխատանքի ամենօրյա անդուլ պայքարի, ձեռք բերած նվաճումների և այդ բոլորին համապատասխանող մտածողության ու աշխարհայացքի արդյունք»[3]:

Հայկական զարդարվեստին նվիրված ալբոմ էր պատրաստել նաև Լ.Դուռնովոն (նյութը ընտրված էր գերազանցապես ձեռագրերի մանրանկարներից), սակայն գիտնականը չհասցրեց ավարտել աշխատանքը և այն հրատարակվեց նրա մահից հետո, արվեստաբան Մ.Սարգսյանի առաջաբանով[4]:

Հայտնի է, որ տարբեր ե հատկապես հարեան ժողովուրդներն ունեն զարդաձևերի նմանատիպ տարրեր, քանի որ, հատկապես կիրառական արվեստի գործերի միջոցով, դրանք հեշտությամբ են տարածվում երկրից երկիր, մի ժողովրդից մյուսին: Սակայն անցնելով մեկ այլ ժողովրդի կիրառության ոլորտը՝ զարդը, որպես կանոն, ստանում է դեղագիտական այլ մարմնավորում: Նոր միջավայրում այն դառնում է այլ ավանդույթների, պատկերացումների ու գեղարվեստական ճաշակի արգասիք: Զարդաձևերի մոտիվները կրում են նաև որոշակի ժամանակաշրջանի կնիք, ուստի և կարող են զգալի դեր խաղալ այս կամ այն հուշարձանի ստեղծման ժամանակը ճշտելու համար: Իսկ եթե գործ ունենք «շարժական» հուշարձանի հետ (օրինակ՝ ձեռագրի, նկարի կամ կիրառական արվեստի որևէ աշխատանքի), հնարավոր է դառնում ճշտել նաև տվյալ հուշարձանի ստեղծման վայրը:

Զարդանախշերի կիրառման ասպարեզը շատ լայն է: Սույն հոդվածի համար ընտրել ենք ճարտարապետական կառույցների դեկորատիվ հարդարանքը, սահմանափակվելով ինչպես որոշակի ժամանակաշրջանով՝ XII-XIII դդ. (մասամբ նաև XIV դ.), այնպես էլ որոշակի տարածքով. այն է՝ Զաքարյանների և նրանց հետնորդների ժամանակ ստեղծված հյուսիսային Հայաստանի վանական համալիրների կառույցների հարդարանքով:

Ի տարբերություն մանրանկարչության, ճարտարապետական դեկորը, զարդահարդարանքը, մինչև այժմ չի արժանացել հատուկ քննության: Ճարտարապետությանը նվիրված ուսումնասիրություններում տարբեր առիթներով եղել են ակնարկներ դրանց մասին: Մինչդեռ, ճարտարապետական դեկորատիվ արվեստի պահպանված հուշարձանները ներկայացնում են ուրույն արժեք:

Քանի որ խոսքը վերաբերելու է ճարտարապետական կառույցների զարդահարդարանքին, հիշենք դրանց վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումը. «Դեկորը միշտ սերտ կապի մեջ է ճարտարապետության հետ, այն մատնանշում է ու բացահայտում դրա տարրերից յուրաքանչյուրը, ընդգծում մանրամասները... Ճարտարապետության համար որպես մակդիր է ծառայում, լրացնում նրան և հստակորեն մեկնաբանում դրա ուղղությունն ու ոգին...ճարտարապետությունն ու դեկորը միևնույն մտքի արտահայտությունն

[3] Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ XII:
[4] Дурново Л., Саргисян М., նշվ. աշխ.

են: Հենվելով մեկի վրա, կարելի է շատ լավ պատկերացում կազմել մյուսի մասին»[5]:

Բոլոր ժամանակաշրջաններում արվեստը զարգանում է նախորդ դարաշրջանից եկող ավանդույթների, ինչպես և տիրող պատկերացումների, գաղափարախոսության ու գեղագիտական հայացքների հիմքի վրա: Որոշակի դեր են խաղում նաև առնչություններն այլ ժողովուրդների մշակույթի հետ:

Անցնելով նյութի քննությանը՝ ամենից առաջ պետք է ծանոթանալ հնագույն ավանդույթներին: Մ.Հասրաթյանն իր վերջին արժեքավոր ուսումնասիրության մեջ հետաքրքիր տվյալներ է բերում Հայաստանի հեթանոսական ժամանակաշրջանի շինարարական արվեստի մասին, որը հիմք է եղել վաղ քրիստոնեական ճարտարապետության համար: «Եկեղեցիները, - գրում է նա, - կառուցվում էին նույն տեխնիկայով, ինչ հեթանոսական տաճարները»[6]: Ինչպես նշում է հեղինակը, դեռևս նախաքրիստոնեական Հայաստանում կառուցվում էին բազիլիկներ ու թաղածածկ միանավ տաճարներ, որոնք հարդարված էին քանդակազարդերով:

Ցավոք, հեթանոսական ժամանակաշրջանից մեզ են հասել այդ մշակույթի միայն փշրանքները: Հայտնի իրողություն է, որ երբ Հայաստանում հաստատվում էր քրիստոնեությունը, Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը գլխավորեցին մեհյանների ավերման գործը: Կառուցվող եկեղեցիների մի մասը հաճախ հիմնվում էր այդ հնագույն շինությունների տեղում. ընդ որում, հաճախ օգտագործվում էին նույնիսկ հին տաճարի սրբատաշ քարերը, որոնց վրա երբեմն պահպանված էին զարդահարդարանքներ:

Զարմանալի ուշագրավ է (նաև խորհրդանշական) այն, որ վերջինների պատկերաձևերն ինչ-որ չափով դարձան նոր ստեղծվող քանդակազարդերի ակունքներից մեկը, անշուշտ, ստանալով միանգամայն այլ իմաստավորում՝ համահունչ և հարմարեցված քրիստոնեական գաղափարախոսությանը: Այդ կապակցությամբ հիշենք թեկուզ Թովմա Արծրունու վկայությունն այն մասին, թե ինչպես 915-921 թթ. Աղթամարի տաճարը կառուցելիս վարպետները, թագավոր Գագիկ Արծրունու հրամանով, Վանա լճի արևմտյան ափում գտնվող քանդված հեթանոսական մի հին մեհյանից տաշած ու նույնիսկ պատկերազարդ քարեր են բերել և օգտագործել Աղթամարի տաճարի կառուցման համար[7]: Ա. Մնացականյանն այդ առիթով դրել է, որ հեթանոսական մշակույթի, հին հավատալիքների հետ կապված հուշարձանները կամ դրանց մնացորդները օգտագործելու միտումն ուներ իր բացատրությունը՝ դրանք համարվում էին ոչ միայն պարտված, այլև նվաճված և կարող էին ծառայել նոր քրիստոնեական գաղափարներին[8]:

---

[5] Baltrusaitis J., Etudes sur l'Art medieval en Georgie et Armenie, Paris, 1929. Մենք օգտագործել ենք այս գրքի հայերեն թարգմանությունը, էջը նշում ենք ըստ թարգմանության՝ 34:

Асратян М., Армянская архитектура раннего христианства, М., 2000, с. 10.

[7] Ագաթանգեղոս, Պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 452-453:

[8] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 297:

Мнацаканян А., Новый опыт толкования настенных рельефов Ахтамарского храма. Доклад, прочитанный на научной сессии в Матенадаране в 1968г.

Այդուամենայնիվ, բոլոր ժամանակներում զարդաձևերի հիմնական և անսպառ ակունքը եղել են ժողովրդական արվեստը, ժողովրդական մտածողությունն ու երևակայությունը: Այդ շտեմարանից լիցք էին առնում և՛ քանդակագործ վարպետները, և՛ նկարիչները, և արվեստների այլ ձևերով զբաղվող մարդիկ:

Մ.Հասրաթյանի հիշատակված աշխատության մեջ բերված է հարուստ նյութ՝ IV-VII դդ. հայկական եկեղեցիների զարդահարդարանքների մասին: Դրանց մեջ քիչ չեն այն տարրերը, որոնց բարդացված և նոր հորինվածքներով հարստացած տարբերակներն օգտագործվել են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ճարտարապետական հուշարձաններում:

VII դ. երկրորդ կեսից եկած և ամբողջ VIII դարում արաբական տիրապետության ծանր պայմաններում ազգային մշակույթն ու արվեստն անկում էին ապրում: Հայ ժողովուրդը օրհասական պայքար էր մղում զավթիչների դեմ: IX դարից այդ պայքարը սկսեց տալ շոշափելի արդյունք, և կարճ ժամանակից հետո Բագրատունյաց թագավորությունը ճանաչվեց որպես կենտրոնական հայկական պետություն[10]: IXդ. երկրորդ կեսից - XI դ. առաջին կեսը Բագրատունյաց Հայաստանն ապրեց իր ծաղկման դարաշրջանը, որը տևեց մինչև սելջուկների ներխուժումը: Այդ ժամանակ վերականգնվում էին երկրի քաղաքները, հիմնվում նորերը[11]: Երկար ընդմիջումից հետո VI-VII դդ. չինարարական արվեստի ավանդույթների հիմքի վրա ճարտարապետությունը վերելք ապրեց: Նույնը պետք է ասել և ճարտարապետական գեղարվեստական դեկորի մասին: IX-XI դդ. կառուցված եկեղեցիների զարդահարդարանքը որոշ չափով կրկնում էր նախորդ (VI-VII դդ.) ժամանակաշրջանի օրինակները, անշուշտ, կրելով նաև փոփոխություններ՝ կապված արվեստի զարգացման օրինաչափությունների հետ: Նորույթ էր կառույցների արտաքին հարդարման մեջ եկեղեցիների պատերը, նաև գմբեթի թմբուկը կամարակապ կեղծ կիսասյուներով զարդարելը[12]: Պատուհանների շրջանակները հարդարվում էին պարզ, բայց նուրբ կատարված երկրաչափական և բուսական մոտիվներով: Բարձրանում էր քարի գեղարվեստական մշակման վարպետությունը: Նորովի ձևավորվում էին եկեղեցիների չքամուտքերը. դռան բացվածքը երիզվում էր կամարներով՝ հենված մի քանի սյուների վրա, որոնք ունենում էին գեղեցիկ խոյակներ ու խարիսխներ[13]:

XII-XIII դդ. Հայաստանի հյուսիսային և կենտրոնական հատվածի փաստական տերերն էին Զաքարյան եղբայրները՝ ամիրսպասալար Զաքարեն և Աթաբեկ Իվանեն, որոնց ջանքերով սկսվեց ավերված տնտեսության

---

[10] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 206:

[11] Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Ե., 1958. Հարությունյան Վ., Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան, (Պատմաբանասիրական հանդես, 1963, 3, էջ 85-100), Զարյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմություն, Ե., 1986:

[12] Հարդարման այդ ձևը հայտնի է Անիի X-XI դդ. հուշարձաններից (հնագույնն է Մայր տաճարը): Նման հարդարանքը ի հայտ է դալիս նաև Վրաստանում, օրինակ, 1003 թ. Բագրատի տաճարում (տե՛ս Джанберидзе Н., Памятники архитектуры Грузии, Л., 1973.).

[13] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 252-254, Азатян Ш., Порталы в монументальной архитектуре Армении IV-XIVвв., Е., 1987.

վերականգնումը: Լայն ծավալ ստացան նաև շինարարական աշխատանքները: Մեծ ուշադրություն էր դարձվում քաղաքներին. ամրապնդվում էին նրանց բերդերն ու պարիսպները, վերակառուցվում եկեղեցիները, վանքերը, հիմնվում նորերը, կառուցվում էին պալատներ, քարավանատներ, կամուրջներ և այլ շինություններ: Նորից բարձրանում է Անին, որը դառնում է վերածնվող Հայաստանի վարչական և մշակութային կենտրոնը[14]: Այստեղ էին հատվում առևտրական կարևորագույն ուղիները, որոնք ձգվում էին սևծովյան կենտրոններից մինչև Հեռավոր արևելք: Բազմաթիվ երկրներից տարբեր ազգերի ու հավատի պատկանող վաճառականներն այստեղ էին բերում իրենց ապրանքները: Այս ամենը անդրադարձն էր ունենում նաև արվեստում. «Առնչությունները օտարերկրացիների հետ,- գրում է Ն. Ստեփանյանը,- առևտուրը Արևելքի հետ ներմուծում էին XII-XIII դդ. հայկական արվեստի մեջ նոր ձևեր, նոր օրնամենտալ, դեկորատիվ տարրեր»[15]:

Զաքարյանների և նրանց հետնորդների օրոք ստեղծված ճարտարապետական հուշարձաններն առանձնանում են ինչպես շինարվեստի կարևոր նորույթներով[16], այնպես էլ դեկորատիվ հարդարանքի արտակարգ հարստությամբ ու բազմազանությամբ: Դեկորատիվ հարդարանքի խնդիրը դարձել էր ժամանակի կարևորագույն հարցերից մեկը: Ձևավորվեց գեղարվեստական նոր ոճ, որը հիմնված էր կատարողական երկու տարբեր եղանակների օգտագործման վրա՝ գունավոր քարերից ստեղծվող «խճանկարային» զարդերի և փորագրության եղանակը[17]: Ճարտարապետական կառույցների նման հարդարումն առաջին հերթին ի հայտ եկավ Անիի քաղաքացիական շինություններում: Այդ կապակցությամբ Վ. Հարությունյանը գրել է. «Այդ ոճը բնութագրվում է եկեղեցական և քաղաքացիական շենքերի շինանյութի և գունային կոլորիտի նույնությամբ, հարդարանքի միջոցների միասնությամբ, դեկորատիվ սկզբունքի լայն կիրառությամբ»[18]: Անիի ճարտարապետական կառույցների և դրանց հարդարանքի բոլոր նորարարությունները որոշակի ազդեցություն թողեցին հայոց այլ տարածքներում կառուցվող շինությունների վրա:

Այդ ժամանակ մշակվեցին մի շարք զարդաձևերի նախընտրելի տեսակներ: Զարդաձևերը, որպես կարգ, բաժանվում են հիմնականում երկու մեծ խմբի՝ երկրաչափական և բուսական: Դրանք օգտագործվում են և՛ առանձին-առանձին, և՛ միահյուսված, զուգակցված մեկը մյուսի հետ: Հաճախ զարդաձևերի մեջ ներմուծվում են տարբեր կենդանական պատկերներ: Ընդ որում, նշված բուսական և կենդանական զարդապատկերները ներկայացվում են և՛ իրական, և՛ երևակայական ձևերով, որոնք իրենց հիմքում կապված են հնից եկող հավատալիքների ու զանազան պատկերացումների վերապրուկների հետ: Զարդահարդարանքներն արտացոլում են նաև ժամանակագրական տարբեր փուլերի սիմվոլիկան, կրում

---

[14] Հարությունյան Վ., Անի քաղաքը, Ե., 1964, Марр Н., Ани, М.-Л., 1934, Токарский Н., По страницам истории армянской архитектуры, Е., 1973.

[15] Степанян Н., Чакмакчян А., նշվ. աշխ., էջ. 32.

[16] Այդ մասին հանգամանալի խոսում է Վ. Հարությունյանը (Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 252-281):

Токарский Н., Архитектура древней Армении, Е., 1946, с.226-227.

[18] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 282:

բազմաշերտ իմաստային բովանդակություն, որի բացահայտումը դժվարին, ոչ միշտ հեշտ լուծելի խնդիր է: Ա.Մնացականյանին հաջողվել է թափանցել հիմնական զարդաձևերի ծագման և դրանց նախնական նշանակության հարցի էության մեջ: Նրա ուսումնասիրությունը հիմնված է, հիմնականում, ձեռագրական նյութի վրա, սակայն հեղինակի բարձրացրած խնդիրները կարևոր են զարդարվեստի բոլոր ճյուղերի համար: Խոսելով զարդաձևերի պարզագույն տեսակների մասին, Ա.Մնացականյանը նկատել է, որ բոլոր ժողովուրդների զարդարվեստում բուսական մոտիվները զբաղեցնում են կարևորագույն տեղ, քանի որ հնագույն ժամանակներից բուսական աշխարհն ընկալվում էր իբրև կյանքի գոյատևման գլխավոր աղբյուրներից մեկը. «Մնդի, ապաստարանի, հագուստի, գործիքի, ջերմության, կահ-կարասիքի, բուժանյութի և այլ կարիքներ հոգալու – գրել է Ա.Մնացականյանը, – այդ բնական ու անսպառ չտեմարանը միշտ էլ գտնվել է մարդկանց ուշադրության կենտրոնում»[19]:

Ճարտարապետական դեկորն օրնամենտալ արվեստի արտահայտություններից է: Նույն ժամանակներում ստեղծված այդ արվեստի այլ ասպարեզների հուշարձաններում՝ կերպարվեստում (որմնանկարչություն, մանրանկարչություն), կիրառական արտադրանքի տարատեսակ իրերում (խեցեղեն, ոսկերչություն, արծաթագործություն, մանածագործություն, գորգագործություն և այլն) ի հայտ են գալիս օրնամենտալ նման զարդերը, իսկ դրանց տարբերությունները պայմանավորված են նյութերի առանձնահատկություններով, որոնք և թելադրում են կատարման եղանակների տարբերությունները:

Ա.Մնացականյանի ուսումնասիրությամբ բացահայտված են նաև օրնամենտալ ձևերի հնագույն օրինակների առաջացման օրինաչափությունները: Արտակարգ կարևոր է նաև ժամանակների ընթացքում դրանց վերափոխված տեսակների իմաստավորումը: Այսօր մեզ մեծապես հետաքրքրում է, թե խորհրդանշական ինչպիսի իմաստ էին ստանում հնից եկող բուսական ու կենդանական մոտիվների երևակայական ձևերը միջնադարում, ինչպես էին դրանք մեկնաբանվում քրիստոնեական գաղափարախոսության տեսանկյունից: Այդ հարցում օգնում են հայկական մատենագրության մեջ պահպանված մեկնությունները, որոնք ուսումնասիրվել և հրապարակվել են Վ.Ղազարյանի կողմից[20]: Նրան հաջողվել է պարզաբանել մի շարք պատկերների իմաստային կամ խորհրդանշական բովանդակությունը:

Զարդանախշերն ուսումնասիրելիս նկատի ենք ունեցել և այն, որ բացի սեմանտիկայի հետ կապված խնդիրներից, դրանք ներկայացնում են նաև արվեստի բնագավառ, ուստի ենթարկվում են գեղարվեստական վերլուծության: Ընդ որում, նույն տիպի զարդաձևերը տարբեր ժողովուրդների մեջ պատկերվում են ըստ տվյալ էթնիկական միջավայրում տիրող գեղագիտական հայացքների և ընկալումների: Ավելին, քանի որ յուրաքանչյուր առանձին դեպքում գործ ունենք կոնկրետ ստեղծագործող վարպետի աշխատանքի հետ, ուստի նրա կերտած ամեն մի նմուշ դառնում է նաև արվեստի եզակի գործ:

Հայկական միջնադարյան ճարտարապետությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ ու ալբոմներ, որոնց հեղինակներն այս կամ այն առիթով անդրադարձել են նաև ներկայացվող կառույցների զարդաքանդակներին:

---

[19] Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 1:
[20] Ղազարյան Վ., նշվ. աշխ.:

Սակայն տվյալ ասպարեզում դեռևս չեն կատարվել հատուկ ուսումնասիրություններ: Մասնավորապես Զաքարյանների ժամանակաշրջանում ճարտարապետական գեղարվեստական դեկորի զարգացումը զուգակցվում էր առանձին ստեղծագործական դպրոցների կազմավորմամբ և գոյությամբ: Դա պայմանավորված էր երկրի ֆեոդալական մասնատվածության իրողությունով: Դրանով են բացատրվում ոճական այն տարբերությունները, որոնք առկա են այդ ժամանակաշրջանի տարբեր տարածքներում ստեղծված հուշարձանների միջև:

ДЕКОР АРМЯНСКИХ АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ XII-XIII ВВ.

ГЕВОРКЯН А.Г.

Резюме

Система орнаментальных украшений армянских архитектурных памятников XII-XIIIвв., преимущественно северо-восточной и центральной Армении периода правления Захаридов и их преемников представляет большой интерес. После освобождения от сельджукского гнета с конца XIIв. наблюдается новый подъем культуры и искусства. Центром возрожденной Армении становится город Ани, ставший вскоре крупнейшим центром международной торговли. Город обустраивается, разворачивается бурная строительная деятельность. Восстанавливаются крепости, церкви, монастыри, строятся и новые. Большое значение придается и гражданской архитектуре – возводятся дворцы, караван-сараи, гостиницы. Обустраиваются и другие города – Карс, Двин, Ереван и др. В оформлении зданий значительное место отводится декоративным украшениям, в исполнении которых применяются два разных метода: использование многоцветной каменной мозаики и рельефной резьбы. Декоративному оформлению придается исключительное значение. Богатый, многообразный декор придает памятникам этого времени особое эстетическое значение. Национальные корни этого орнамента тесно связаны с использованием древних народных традиций.